ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԾՁԲ-18/49-1>>

ք. Երևան «19» փետրվարի 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հակոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային սարքերի և սարքավորումների վերանորոգման և սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 162 800 (Մեկ միլիոն հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ 193 800 (Մեկ հարյուր իննսուներեք հազար ութ հարյուր) ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Երեբունի վարչական շրջանների աշխատակազմերը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Բևեռային ուղի» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի 1	Ք.Երևան, Մանանդյան 25 շ. բն. 26
Կենտրոնական գանձապետարան	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 900052470367	ՀՀ 1510032345990100
ՀՀ 900022600309	ՀՎՀՀ 02228306
ՀՎՀՀ 02593108	
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 02 2018 թ. կնքված
ԵՔ-ԳՀՇՁԲ-18/49-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
Հաշվի համարը		***900052470367***					
1	50311120/15	***Պատճենահանման սարքերի և լազերային տպիչների սպասարկում և ընթացիկ վերանորոգում***- հետևյալ տպիչների՝ Hp 1005, Hp 1018, Canon 3050, Hp 1020,Canon 4410, Hp1010, SAMSUNG SCX 3400, RICON SP 210, SAMSUNG ML 2160, Canon LBP 6000B, Canon MF 3010, Canon MF 229DW, Hp 1300, SAMSUNG M 2020, XEROX 3100, Hp officejet 7110, XEROX Workcentr 3045, Lex mark E 250D, Hp p1102 պրոֆիլակտիկա, դիագնոստիկա, կոմպլեկտավո րող մի քանի մասերի փոխարինում միասին (վառարանի թերմոթաղանթի փոխարինում, վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում, վառարանի ռետինե լիսեռի փոխարինում, սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում, բաժանիչ հարթակի փոխարինում, թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում, վառարանի փոխարինում, ատամնաանիվի փոխարինում, տպող գլխիկի փոխարինում, շլեյֆի փոխարինում, կառավարման վահանակի շլեյֆի փոխարինում, դիմային և վերին կափարիչների փոխարինում, ռեդուկտրի փոխարինում, սարքի վերածրագրավորում, անհրաժեշտության դեպքում թերությունների հայտնաբերում և վերանորոգում: (առնվազն 40 սարք)	դրամ	82 800		Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Սեբաստիա -32	պայման ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը
2	50311120/8	***Համակարգիչների սպասարկում և ընթացիկ վերանորոգում*** - պրոֆիլակտիկա, Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում, վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում, մայրական սալիկի վերանորոգում կամ փոխարինում, հիշողության սարքերի փոխարինում (RAM DDR, DDR2, DDR3), կոշտ սկավառակի վերանորոգում կամ փոխարինում (HDD), CPU-ի հովացուցիչի փոխարինում, սնուցման բլոկի փոխարինում /450W-550W/, համակարգչային պահարանի հովացուցիչների փոխարինում, դիսկովոդի փոխարինում, ինչպես նաև համակարգչի հնարավորության դեպքում արդիականացում, համապատասխանեցնելով WINDOWS 7, WINDOWS 10 օպերացիոն համակարգերին: (առնվազն 80 հատ)	դրամ	150 000		Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Սեբաստիա -32	պայման ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը
3	50311120/9	***Քարթրիջի լիցքավորում*** - 12A, 13A, 35A, 337A, SAMSUNG 101, SAMSUNG 111, 85A, 725A, Canon 728, XEROX 3040, XEROX 3010, 92A, RICON քարթրիջների պրոֆիլակտիկա և կոմպլեկտավորող մի քանի մասերի փոխարինում կամ վերանորոգում միասին, քարթրիջի լիցքավորում, քարթրիջի թմբուկի փոխարինում, մագնիսական գլանի փոխարինում, դանակի փոխարինում,կառատրոնի փոխարինում, ռաքելի փոխարինում, չիպի զրոացում, անհրաժեշտության դեպքում թերությունների հայտնաբերում և վերանորոգում (լիցքավորված քարթրիջը պետք է ենթադրի բոլոր թերությունների և անսարքությունների բացառում): (առնվազն 400 հատ)	դրամ	658 800		Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Սեբաստիա -32	պայման ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը
Հաշվի համարը		***900052470656***					
4	50311120/10	***Քարթրիջի լիցքավորում*** - SAMSUNG SCX-3405; XEROX	դրամ	70 800		ք. Երևան,	պայման

		PE20i; CANON LBP2900B քարթրիջների պրոֆիլակտիկա և կոմպլեկտավորող մի քանի մասերի փոխարինում կամ վերանորոգում միասին, քարթրիջի լիցքավորում, քարթրիջի թմբուկի փոխարինում, մագնիսական գլանի փոխարինում, դանակի փոխարինում,կառատրոնի փոխարինում, ռաքելի փոխարինում, չիպի զրոացում, անհրաժեշտության դեպքում թերությունների հայտնաբերում և վերանորոգում (լիցքավորված քարթրիջը պետք է ենթադրի բոլոր թերությունների և անսարքությունների բացառում): (առնվազն 49 հատ)				Անդրանիկի 125/5, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը
5	50311120/12	***Պատճենահանման սարքերի և լազերային տպիչների սպասարկում և ընթացիկ վերանորոգում***- SAMSUNG SCX-3405; XEROX PE20i; CANON LBP2900B պրոֆիլակտիկա, դիագնոստիկա, կոմպլեկտավորող մի քանի մասերի փոխարինում միասին (վառարանի թերմոթաղանթի փոխարինում, վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում, վառարանի ռետինե լիսեռի փոխարինում, սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում, բաժանիչ հարթակի փոխարինում, թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում, վառարանի փոխարինում, ատամնաանիվի փոխարինում, տպող գլխիկի փոխարինում, շլեյֆի փոխարինում, կառավարման վահանակի շլեյֆի փոխարինում, դիմային և վերին կափարիչների փոխարինում, ռեդուկտրի փոխարինում, սարքի վերածրագրավորում, անհրաժեշտության դեպքում թերությունների հայտնաբերում և վերանորոգում: (առնվազն 40 հատ)	դրամ	58 800		Ք. Երևան, Անդրանիկի 125/5, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	պայման ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը
6	50311120/14	***Համակարգիչների սպասարկում և ընթացիկ վերանորոգում*** - Պրոֆիլակտիկա, Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում /Win 95/98/2000/XP, Vista MS Offis, acrobat reader, fonts arm/rus, antivirus/, վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում, մայրական սալիկի վերանորոգում կամ փոխարինում, հիշողության սարքերի փոխարինում (RAM DDR, DDR2, DDR3), կոշտ սկավառակի վերանորոգում կամ փոխարինում (HDD), CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ Պ-4 Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ /Cooler for CPU P4 Intel original/, կամ համարժեքը, սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում /With PS 450W/, կամ համարժեքը, համակարգչային պահարանի հովացուցիչների փոխարինում, դիսկովոդի փոխարինում: (առնվազն 40 հատ)	դրամ	58 800		Ք. Երևան, Անդրանիկի 125/5, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	պայման ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը
Հաշվի համարը		***900022600309***					
8	50310000/2	**Պատճենահանման սարքերի և լազերային տպիչների (թվով 50) սպասարկում և ընթացիկ նորոգում** (HP laserjet p1566, Canon Lbp 2900, Canon Lbp 6030, Samsung Ml 2160, Canon Mf 4730, Canon mf 216n, Canon Mf 4410, Canon Mf 212w, HP LaserJet Pro MFP M225 rdn) - թերմոթաղանթի, տեֆլոնե լիսեռի, ռետինե լիսեռի, մաքրող դանակի, բաժանիչ հարթակի, վառարանի, ատամնաանիվի, տպող գլխիկի, ռեդուկտորի, թմբուկի, քարթրիջների նորոգում, անհրաժեշտության դեպքում փոխարինում: Սկաներների և լամպերի վերանորոգում: Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի պահանջից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում	դրամ	82 800		Էրեբունի վարչական շրջան Ս.Դավիթ 87	պայման ագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. դեկտեմբերի 25-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900052470367
ՀՀ 900022600309
ՀՎՀՀ 02593108

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
Ք.Երևան, Մանանդյան 25 շ. բն. 26
«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 1510032345990100
ՀՎՀՀ 02228306

(ստորագրություն)
Կ.Տ.